զանձն իւր յանպարտ արենէ Նիկիփորայ, զոր արար դրդմամբ պիղծ Թագուհոյն:

Կոռժան Թագաւորեաց ամս Զ. յետ Չմշկկայ. բայց Յոյնք զՎասիլ և զԿոստանդին՝ ասեն՝ յետ Յոհաննիսին, զԿոռժան ոչ ասեն Թագաւորել. և ճշմարիտն՝ Յունացն է:

Վասիլ Թագաւորէ ձեռնտուութեամբ Չմշկիս Հայոց ամս Լ.Ը: Սա եկեալ 'ի Կիւլիկէ, մկրտեցաւ 'ի վանքն Պաղակծիակ՝ և երկիր եպագ նմա: Յաւուրս սորա պարսպեցաւ Անի. և Տէր Պետրոս գնաց առաջի նորա 'ի Տրապիզոն, և արար հաշտութիւն, և օրհնեաց զջուրն: Յաւուրս սորա Գ. Թագաւորք նստան Հայոց. և իբրև Թագաւորեաց Յահն-Յահ Սմբատ՝ որդի Աշոտոյ, պարսպեաց զԱնի լիր արկեալ նմա բարձրաբերձ բրգօք և լայնատարած տեղեօք յԱխուրեան գետոյն մինչև 'ի Ծաղկաձորն. և շինեաց զԿաթուղիկէն պայծառ, զոր ոչ

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան